
ՆՈՐ ԲԱՌԵՐ ՀՈՎՀԱՆՆԵՍ ՕՁՆԵՑՈՒ ՆՈՐԱՀԱՅՑ
ՏՈՆԱՑՈՒՑԱՅԻՆ ԵՐԿՈՒՄ

ՎԱՐՄԻՎ ՆԵՐՄԻՍՅԱՆ

Հովհաննես Օձնեցու գրչին են պատկանում կրոնակեղեցական, դավանաբանական բնույթի մի շարք երկեր, որոնք տարբեր ժամանակներում ոչ միայն հրատարակվել են զանազան ժողովածուներում, այլև ունեն իրենց աշխարհաբար թարգմանությունը¹: Դրանցից առավել հայտնի են «Ատենաբանութիւն», «Ընդդէմ պաւղիկեանց», «Ընդդէմ երեւութականաց», «Յաղագս կարգաց եկեղեցւոյ», «Յաղագս կարգաց եկեղեցւոյ Քրիստոսի» և այլն:

Վերջերս լույս տեսավ Օձնեցու երկերից ևս մեկը՝ «Նախահաւաքումն պատմութեան այսմ բանից՝ Յովհաննու Վերծանաւղի»² վերնագրով, որը ոչ միայն բովանդակային, քերականական, այլև բառապաշարային աղերսներ ունի նախորդների հետ: Այս երկում գործածված բազմաթիվ բառեր և տերմիններ (դրանք հիմնականում ունեն կրոնակեղեցական ուղղվածություն) հանդիպում են նաև նախորդ՝ հայտնի երկերում: Այստեղ գործածված շատ բառեր, անշուշտ, վկայված են «Նոր հայկազյան բառարանում»³, հին և նոր բազմաթիվ վկայություններով (նկատի ունենք՝ Օձնեցուց հետո): Մի քանի բառերի դեպքում, սակայն, ՆՀԲ-ը բերում է միայն հետազայի վկայություններ: Մինչդեռ դրանք գործածված են վերը նշված երկում: Դրանք են՝ աղանդակից, արտաձգել, եռահրաշ, ըստարտուղիմ, յեստդարձութիւն, յոգնահեղք:

Աղանդակից գոյականը, որ նշանակում է «միևնույն աղանդից» (ՆՀԲ, 1, 33), հոլովվում է ի - խ խառը հոլովմամբ՝ եզակի և հոգնակի սեռական հոլովներում ունենալով աղանդակցի, աղանդակցաց ձևերը: ՆՀԲ-ն այս բառի գործածության օրինակներ է բերում XIII դ. հեղինակից, «Ճառընտիրից», բայց ոչ Օձնեցուց: Թեև վերը նշված երկում բառը հոգնակի հայցականով գործածվել է որպես միասնության խնդիր. «...այր ճշմարիտ եւ լի հաւատովք Հոգւոյն, ազդ առնէր շրջաբերական թղթովք ամենայն աշխարհիս Հայոց՝ մի՛ ումէք ճանապարհորդել ի քաղաքն Երուսաղէմ, եւ մի՛ պղծել հաղորդութեամբ ընդ Յոբնաղի ձեռնադրեալս եւ աղանդակիցս»⁴:

¹ Հ ո վ հ ա ն ն Ե ո Ս Օ ձ ն Ե ց ի. Երկեր, գրաբարից փոխադրումը, առաջաբանը և ծանոթագրությունները Վ. Համբարձումյանի, Երևան, 1999:

² Ա. Հ ա կ ո բ յ ա ն. Հովհանն Օձնեցու տոնացուցային երկը՝ «Նախահաւաքումն պատմութեան այսմ բանից՝ Յովհաննու Վերծանաւղի».- «Հանդես ամսօրյա», 2006, էջ 92-130:

³ Գ. Ա լ Ե տ ի ք Ե ա ն, Ն. Մ ի լ ր մ է լ Ե ա ն, Մ. Ա լ Գ Ե ր Ե ա ն. Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հ. 1-2, Վենետիկ, 1836-1837 (վերահրատարակություն, Երևան, 1979-1981. այսուհետև՝ ՆՀԲ, հատորը և էջը կնշվեն մեջբերմանը կից):

⁴ Ա. Հ ա կ ո բ յ ա ն. նշվ. աշխ., էջ 100 (այսուհետև էջը կնշվի մեջբերմանը կից):

Ըսկական բարդության աղանդ⁵ և կից (ՀԱԲ, II, 595) արմատներն անստույգ են և կապակցված են լրացում + ածական լրացյալ սկզբունքով:

ՆՀԲ-ն արտաձգել՝ «դուրս ձգել» (I, 378) չեզոք բայի դիմաց վկայություններ է բերում միայն Թովմա Արծրունուց և Գրիգոր Նարեկացուց: Սակայն այն գործածվել է նաև Օձնեցու երկում. «Ո՛չ զաբաթ, այլ զկիրակե՛ք քան շաբաթուն ակն մահ է, թե՛ արտաձգե՛ք՝ յանցեալսն արտաձգի, ո՛չ յապառնիսն...» (122):

Բայը ձևավորվել է արտ- նախածանցով՝ ձգել բայից: ՆՀԲ-ում կա նաև արտաձգութիւն գոյականը՝ հետագայի վկայությամբ:

Ընդամենը մեկ վկայություն է նշված եռահրաշ՝ «երիցս հրաշալի» (ՆՀԲ, I, 661) ածականի դիմաց՝ XII դ. հեղինակից, մինչդեռ այն ևս գործածել է Օձնեցին. «Աստանաւր բացայայտեցից նախ եւ առաջին զեռահրաշ եկեղեցեացն զերկաքանչիւրոցն...» (121):

Բարդության հրաշ աստրական արմատը (ՀԱԲ, III, 131) լրացրել է եռ բնիկ հայերեն բառին: Ի դեպ, Աճառյանը ևս նշում է եռահրաշ բառը՝ վկայակոչելով հետագա հեղինակների (ՀԱԲ, II, 29):

Ըստարտուղիմ բնիկ հայերեն ուղի (ՀԱԲ, III, 595) արմատով ձևավորված բայը «ճանփից դուրս ելնել» իմաստն ունի (ՆՀԲ, I, 787), ինչպես և զարտուղիմ բայը: ՆՀԲ-ում միայն մեկ գործածություն է նշվում՝ հետագա հեղինակից: Կրավորաձև խոնարհումով այն հանդես է եկել նաև Օձնեցու երկում. «...որպէս եւ յայնժամ արիւնաւորքն՝ հաստատեալքն՝ ի Քրիստոս, ըստարտուղեցան նախանձախնդիրք արիւնացն Մովսիսի» (110):

Բառի հիմքն է արտուղի՝ «զարտուղի « (ՆՀԲ, I, 382) ածականը, որին ավելացել է ըստ նախդիրը և բայական վերջավորությունը:

Միայն «Ճառքնտիրից» վկայություններ են բերված յետսդարձութիւն «հետտություն, ապստամբություն» բառի դիմաց (ՆՀԲ, 2, 357): Այս բառը գործածված է նաև Օձնեցու երկում՝ պատճառի պարագայի կիրառությամբ. «...սակայն վասն առհասարակ յետսդարձութեանն ամենեցուն ուղիղ հաւատոյն եւ զարտուղելոյս յարքունական ճանապարհէն՝ հիացեալ դողամք» (100):

Յետ բնիկ հայերեն բառը (ՀԱԲ, III, 397) կապակցվել է դարձութիւն՝ «դառնալը» (ՆՀԲ, I, 605) գոյականին, որի արմատն է՝ դարձ (ՀԱԲ, II, 639), և որը նույնպես բնիկ է:

Յոգնահեղք՝ «բազմազեղ, հորդառատ» (ՆՀԲ, 2, 364) ածականի դիմաց նշված է միայն Ստեփանոս Մյունեցու թարգմանությունը: «Ձի թէպէտ եւ բնութեամբ աստեղք յերկինս եւ յոգնահեղք են, սակայն ի ծագել արեգականն՝ առ չհամեմատել բազմաց նոյն ծածկին» (112) նախադասության մեջ այն հանդես է եկել որպես ստորոգելի: Բառը կազմված է յոգն «շատ, բազում» անստույգ բառից (ՀԱԲ, III, 402) և հեղ բնիկ հայերեն արմատից (ՀԱԲ, III, 402), որոնց միջև առկա է լրացում (պարագա) + բայահիմք լրացյալ շարահյուսական հարաբերություն:

Նոր երկում անհամեմատ ավելի շատ են այն բառերը, որոնք ընդհանրապես վկայված չեն ՆՀԲ-ում: Կարծում ենք, որ այս կարգի բառերը նախորդների հետ

⁵ Հր. Ա ճ ա ո յ ա ն. Հայերեն արմատական բառարան, հ. I, Երևան, 1971, էջ 120, հ. II, 1973, հ. III, 1977, հ. IV, 1979 (այսուհետև՝ ՀԱԲ, հատորը և էջը կնշվեն մեջբերմանը կից):

միասին պետք է համարել Օձնեցու հեղինակային կազմություններ, մանավանդ եթե հաշվի առնենք դրանց բառակազմական մի շարք օրինաչափություններ, որոնք հատուկ են Օձնեցու նորակազմություններին առհասարակ:

Ներկայացնենք այդ բառերն առանձին - առանձին:

Դրանք են՝ աղանդախումբ, աներկաւորելի, առաքելասահման, առուղղեկանաբար, արտեմոնադիր, աւետազուարճ, աւետահրաշ, գրատրական, դժնախորամանգութիւն⁶, երկնածնացն (<երկնածինք), ընձիւռնաբանութիւնսն, ըստերիւրութեանն (<ըստերիւրութիւն), ժամանակապատում խաչակերպեալ (<խաչակերպեմ), հեռահիւսակ, հնագիտագիրք, հոգեախաւսութեանցն (<հոգեախաւսութիւնք), հոգեպաճոյճ, մոլեղաւան, յաւետահրաշութիւնն, ներկական, ներհունապէս, նմանախաւսել, նորադարք, շարագնդել, շարակայութիւն, շարակող, շարաճշգրտել, շնորհաւանդ, ոյքնապէս, սահմանակի, վաշմտութիւն, վերակացիկ, տարեարք // անտարեարք, տրամագաղափարութիւն, ցորենակերպ, ուղումբրամած, քողախնդիր: *Մրանցից մի քանիսը հետագայում տեղ են գտել «Առձեռն բառարանում»⁷, ինչպէս՝* առաքելասահման, աւետազուարճ *և այլն:*

Աներկաւորելի *ածականը գործածվել է հետևյալ նախադասության մեջ՝* որպէս ստորոգելի. «Արդ վասն առաւելութեան փառացն Հաւր եւ վասն իւրացուցանելովն ինքեան զկուսածին ծնունդն՝ *ամենեւին* աներկաւորելի է եղելութիւնն եւ միականութիւնն ծննդեանն եւ սկիզբն արարութեանն (114):

Բառի սերող հիմքն է երկաւոր «երկվորյակ» *ածականը, որը նաև գոյականական գործածություն ունի (ՆՀԲ, I, 690), որից ան- նախածանցի և -ելի վերջածանցի միջոցով ձևավորվել է նորակազմությունը: Բառի արմատն է երկ (երկու), որն ունի բնիկ հայկական ծագում (ՀԱԲ, II, 65):*

Առաքելասահման *ածականն ունի «առաքյալների կողմից սահմանված»* *իմաստը: Այն որոշչային կիրառություն է ստացել հետևյալ նախադասության մեջ. «...ապաքէն զինքեանս կարծելով յաւէտ քան զառաքեալս՝ երկուս բնութիւնս ասացին զՔրիստոսն եւ յերիս տաւնս բաժանեցին զմի տաւնն եւ եղծումն արարին կարգաց առաքելասահման եկեղեցոյ» (116):*

Բառի հիմքերն են՝ առաքեալ, *որը կազմված է առ նախդրով և արք՝ «ոտք»* *արմատով ձևավորված բառից (ՀԱԲ, I, 256), և սահման, որը պահլավական ծագում ունի (ՀԱԲ, IV, 162):* Հողակապով իսկական բարդության բաղադրիչները կապակցված են խնդիր + բայահիմք լրացյալ հարաբերությամբ, որտեղ լրացումը բացառական հոլովի նշանակություն ունի:

Առուղղեկանաբար *մակբայը, որ, հավանաբար, մեկ դ-ով պետք է լինի, ուղի ուրարտական ծագումով՝ արմատից է կազմված: ՆՀԲ - ն տալիս է առուղեկան «անցավոր, առժամանակյա»* *ածականը, որի դիմաց վկայակոչում է Նարե-*

⁶ Այստեղ կ-ի փոխարեն գ-ով գրությունը խորթ չէ հայերենին առհասարակ (հմմտ.՝ բացազանչութիւն, ցանգ և այլն):

⁷ Մ. Ա լ գ ե ր ե ա ն. Առձեռն բառարան հայկագնեան լեզուի, Անթիլիաս, 1988 (այսուհետև՝ ԱԲ, էջը կնշվի մեջբերմանը կից):

⁸ Գ. Ջ ա հ ու կ յ ա ն. Հայոց լեզվի պատմություն: Նախագրային ժամանակաշրջան, Երևան, 1987, էջ 428:

կացուն միայն (ՆՀԲ, I, 132): Եթե նկատի ունենանք ժամանակային գործոնը, ապա այն պետք է որ Օձնեցու կազմությունը լինի: Օձնեցու երկում բառի կողքին հանդես է եկել նաև հոմանիշը. « Ո՛չ առուղեկանաբար, անցաւորաբար, այլ յարակայ ւարէնն էր յիշատակին, զի աւարտեցան բանք նոցա նախանկար գաղափարաւ ըստ ւարինակի, զոր աւետարանեցին սակս անապական ծննդեանն» (118):

Հետաքրքրական է արտեմոնադիր՝ «Արտեմոնի կողմից դրված, սահմանված» նշանակությամբ ածականը: Պետք է նկատել, որ անձնանուններից նոր բառեր կերտելը խորթ չէ Օձնեցու բառակազմական համակարգին: Այս ածականի դեպքում ևս բաղադրիչները կապակցված են խնդիր լրացում + բայահիմք լրացյալ հարաբերությամբ: «Ապաքէն, եթէ արտեմոնադիր տաւնախմբութեանցն կարգ հաստատեալ էր ի Նիկիայ, նոյն հաստատեալ լինէր եւ յերկրիս Հայոց» (105) նախադասության մեջ բառը հանդես է եկել որպէս նախադաս որոշիչ:

Երկնածին ածականը հոգնակի թվով որոշչային կիրառություն է ստացել. «...որում կենսագործին ազգք երկնածնացս եւ նորադարք, որ զիր զանգրաւ զաստուածութիւնն՝ ի նոյնն կատարեալ դարու ուրբաթուն» (122):

ՆՀԲ - ն չունի նաև նորադար ածականը: Երկու բառերն էլ, հավանաբար, «նոր ի հայտ եկած, նոր ժամանակներում ծնունդ առած» նշանակությունն ունեն: Երկնածին բառում առկա է պարագա (բացառականի նշանակությամբ) + բայահիմք լրացյալ կադապարը, իսկ նորադար բառում՝ որոշիչ + որոշյալ շարահյուսական հարաբերությունները: Նոր (ՀԱԲ, III, 466) և ծին (ՀԱԲ, II, 457) արմատները բնիկ հայերեն են, դար (ՀԱԲ, I, 631) արմատն ասորական ծագման է, իսկ երկն < երկին (ՀԱԲ, II, 62) արմատն անստույգ է:

Աւետազուարճ՝ «աւետեօք զուարճացող» ածականը նշված է ԱԲ-ում (152): Այն որպէս նախադաս որոշիչ է գործածվել հետևյալ նախադասության մեջ. «Բայց սուրբ առաքեալքն ո՛չ յարմարեցին ըստ վաշմտութեանն այնմիկ, այլէ զԱւետարանացն յաւետահրաշոյթիւնն եւ զառաքելոց եւ զմարգարէիցն գերազանցութիւն եւ զեկեղեցեացն զաւետազուարճ բարձրութիւնն եւ զիրեանց փառաւորութիւն...» (117-118):

Նորակազմության բաղադրիչները կապակցված են լրացում (խնդիր) + բայահիմք լրացյալ հարաբերությամբ, այն է՝ աւետ (ՀԱԲ, I, 358) + զուարճ (ՀԱԲ, II, 107) արմատով բայահիմք: Գործածված երկու արմատներն էլ անստույգ են:

ՆՀԲ-ից բացակայում են նաև վաշմտութեանն և յաւետահրաշոյթիւնն գոյական - բառաձևերը: Ա. Հակոբյանը կարծում է, որ գուցե սրանցից առաջինը պետք է լիներ վատմտութեանն⁹, որը հավանական է, սակայն այդ ձևով ևս ՆՀԲ-ն չի նշում այն: Բառի վատ (ՀԱԲ, II, 325) և միտ (ՀԱԲ, III, 325) արմատները բնիկ հայերեն են:

ԱԲ - ում նշված է յաւետահրաշ՝ «միշտ հրաշալի, հիանալի» ածականը միայն (591), որում առկա է որոշիչ + որոշյալ հարաբերությունը, և որի արմատ-

⁹ Ա. Հ ա կ ո բ յ ա ն. նշվ. աշխ., էջ 117:

ներն են՝ յաւէտ (ՀԱԲ, IV, 392) պահլավական և հրաշ (ՀԱԲ, III, 131) աստրական բառերը:

Գրատրական ածականի ր – ն, հավանաբար, ավելորդ է, և բառի արմատն է գրատ՝ «զգեստ, վերարկու, կտորի վրա գրված» (ՆՀԲ, I, 584), որին ավելացել է -ական վերջածանցը: Բառը գործածվել է որպես նախադաս որոշիչ՝ հետևյալ նախադասության մեջ. «Եւ վասն այս ըստերիւրութեանս հարկ եղև ինձ՝ ըստ ազդեցութեան շնորհին յառեալ ի ժամանակականս եւ վերծանեալ ենթատրաբար զգրատրական տառս նոցա՝ եւ հետագաւտել ներհունապէս զՅովսէպոս, զՓիլոն, զԵրիանոս ... , ոյքնապէս զԵպիփան՝ Պարունակականն, զՌոզինէս՝ բաղդատող զգիրս Աստուածաշունչս» (100):

Նշված օրինակում գործածված են նմանատիպ ևս երեք բառեր՝ ըստերիւրութեանս, որի հիմքն է ըստերիւրեմ (կազմված է ըստ նախորդից և -երիւր բնիկ հայերեն բառից, ՀԱԲ, II, 57), ներհունապէս և ոյքնապէս: Ներհունապէս մակբայը թեև նշված չէ ՆՀԲ-ում, սակայն կա ներհուն ածականը՝ «հմուտ, իրազեկ» իմաստով (ՆՀԲ, 2, 420), որից բաղադրված են նաև ներհունանամ և ներհունութիւն բառերը: Ընդ որում, բոլոր բառերի դեպքում բերվում են X դ. հետո երևան եկած վկայություններ: Փաստորեն, բառակազմական հիմքն է ներհուն, որի հուն արմատը բնիկ հայերեն է (ՀԱԲ, III, 122):

Հետաքրքրական է ոյքնապէս բառի կազմությունը՝ «որոնց պես» նշանակությամբ, որ գործածվել է ստորադասական շաղկապի կիրառությամբ: Ինչպես և նկատելի է, բառը ձևավորվել է ո (ով) դերանվան հոգնակի ուղղականով՝ -պէս ածանցի միջոցով:

Դժնախորամանգութիւն գոյականը հայցական հոլովով հանդես է եկել հետևյալ նախադասության մեջ՝ որպես ուղիղ խնդիր. «Այլ դու՛, ո՛վ ուղղափառդ, ի միտ առ եւ ծանի՛ր զդժնախորամանգութիւնս նոցա որպէս յամենայն կողմանց խաբել» (128):

Բառը ձևավորվել է խորամանգութիւն գոյականից (ՆՀԲ, I, 972)՝ դժնեայ ածականի հավելումով, որը որպես որոշիչ է հանդես եկել: Դուժն արմատը պահլավական ծագում ունի (ՀԱԲ, I, 663): Խորամանգ բառի խոր արմատն անստույգ է (ՀԱԲ, II, 405), իսկ մանգ՝ «անգություն» բառը դարձյալ պահլավական ծագում ունի (ՀԱԲ, III, 254):

Խաչակերպեմ բայի հիմքն է խաչակերպ «խաչանման»՝ մակբայի կամ ածականի նշանակությամբ: Այն անցյալ դերբայով գործածվել է որպես ձևի պարագա. «Վասն երկրորդ շաբաթուն առարէ կանոնին այս է պատճառ. ի շինել զքաղաքն քառանկին՝ խաչակերպեալ գհիմնադրեալսն...» (126):

Արմատներն են խաչ (ՀԱԲ, II, 333) բնիկ հայերեն և կերպ (ՀԱԲ, 578) պահլավական բառերը:

Հեռահիւսակ ածականը որպես նախադաս որոշիչ է հանդես եկել հետևյալ նախադասության մեջ. «Եւ յերկրորդում աւուր ստորիջի՝ ըստ հեռահիւսակ դիմաց...» (119):

Բառակազմական հիմքն է հիւսակ՝ «հյուսք, կապ» (ՆՀԲ, 2, 102) գոյականը, որին որպես նախադաս որոշիչ լրացրել է հեռ արմատը, որ ծագումով բնիկ հայերեն բառ է (ՀԱԲ, III, 81):

Հնագիր գոյականը նշված է ՆՀԲ-ում (2, 105)՝ «գիտակ հին պատմություններին» իմաստով, իսկ ահա հնագիտագիր բառը նշված չէ. այն «հին ավանդաբույցների մասին պատմող» իմաստով գործածվել է Օձնեցու երկում. «...գի ամենեքեան նոքա ժամանակապատումք եղեալ են, յարացոյցք, ժամանակաց եւ հնագիտագիրք եւ շարագիրք (101):

Հնագետ հիմքին կցվել է գիր գոյականը՝ ձևավորելով հատկացուցիչ + հատկացյալ հարաբերությունը: Բառի արմատներն են՝ հին (ՀԱԲ, II, 94), գետ (ՀԱԲ, I, 551) և գիր (ՀԱԲ, I, 561), որոնք բնիկ հայերեն բառեր են: Ի դեպ, ժամանակապատում գոյականը ևս նշված չէ ՆՀԲ-ում, որը որպես ստորոգելիական վերադիր է հանդես եկել և նշանակում է «ժամանակին պատմված»: Փաստորեն, բաղադրիչները կապակցված են պարագա լրացում + բայահիմք լրացյալ հարաբերությամբ: Արմատներն են՝ ժամանակ (ՀԱԲ, II, 221) պահլավական և պատում (ՀԱԲ, IV, 51) անստույգ բառերը:

Հոգեխաւսութիւն գոյականը ևս նշված չէ, կա միայն հոգեխաւս ածականը՝ «սուրբ, հոգով խոսված, ասված» իմաստով, որի դիմաց բերված է մեկ վկայություն՝ Գրիգոր Տղայից: Գոյականը ձևավորվել է հոգի բնիկ հայերեն բառով (ՀԱԲ, III, 107), որը որպես գործիական հոլովի նշանակությամբ խնդիր լրացրել է խաւս (ՀԱԲ, II, 434) անստույգ բայահիմքին և ստացել -ութիւն ածանց: Օձնեցու երկում այն հոգնակի տրականով գործածվել է որպես հիմունքի պարագա. «...քանզի հարքն, որ ի Նիկիայ, ի Կոստանդնուպալիս, ըստ մարգարէական հոգեխաւսութեանցն, ըստ առաքելոցն սահմանակի մին եւ զմի Տէր խոստովանեցին միով բնութեամբ, եւ ո՛չ երկու» (128):

Ի դեպ, սահմանակի ածականը, որ նույն կիրառությունն է ստացել, ինչ նախորդը, ևս նշված չէ ՆՀԲ-ում և, հավանաբար, «սահմանված» նշանակությամբ պետք է թարգմանել, որ նույնական է առաքելասահման բառին, միայն թե այստեղ -ակի ածանցն է ավելացել հիմքին: ԱԲ -ում կա միայն սահմանակից ածականը, որ «դրացի» իմաստն ունի (712) և կապ չունի նախորդի հետ:

Հոգեպաճոյճ ածականը «հոգին զարդարող» իմաստով գործածվել է որպես որոշիչ. «Ընթեռնու Կարողիկէ, եւ արինադրի հոգեպաճոյճ զարդ չքնադութեան ի հեզասահ հրամանս փեսային...» (124): Բաղադրիչների միջև առկա է ուղիղ խնդիր + բայահիմք լրացյալ կապը: Պաճոյճ արմատն իրանական ծագում ունի (ՀԱԲ, IV, 15):

Ընձիւոնաբանութիւն գոյականը գործածվել է հետևյալ նախադասության մեջ. «...սոքա յայտնեցին զառաջնոցն զուղղափառացն զորթողոզական խոստովանութիւնն եւ զշարափառացն եւ զմլեդաւան աղանդախումբ հերձուածոյն զընձիւոնաբանութիւնսն» (101): Ենթադրվում է, որ պետք է լիներ ընձեռնաբանութիւնսն՝ «տվչություն, ավանդություն» իմաստով¹⁰: Այնուամենայնիվ, երկու ձևերն էլ չկան ՆՀԲ-ում: ՆՀԲ-ից բացակայում է նաև մլեդաւան ածականը, որ նշանակում է «մոլի կերպով դավանող» : Բառում առկա է պարագա + բայահիմք լրացյալ կադապարբ: Գործածվել է որպես նախադաս որոշիչ: Բառի

¹⁰ Նույն տեղում, էջ 130:

մովի արմատը բնիկ հայերեն է (ՀԱԲ, III, 339), իսկ դաւան արմատն անստույգ է (ՀԱԲ, I, 641):

Հատկացուցիչ + հատկացյալ հարաբերությամբ է ձևավորված աղանդախումբ գոյականը, որ նշանակում է «աղանդներով լի» և կազմված է աղանդ (ՀԱԲ, I, 120), խումբ (ՀԱԲ, II, 419) անստույգ արմատներից:

Ներկական բառը ՆՀԲ-ում կա և նշանակում է «ներկի գործություն ունեցող» (2, 418), սակայն Օձնեցու երկում այն ներկա բառից է կազմված և նշանակում է «ներկային, ներկա ժամանակին բնորոշ», որի մասին ՆՀԲ-ն չի նշում. «Ո՛չ լոկ գներկական ժամանակին գմարդիկ այլև գանցելոցն եւ գսպառնեացն միանգամայն վերածնէր՝ լնլով գմարգարէականն, եթէ ...» (104): Այս իմաստով ՆՀԲ-ն տալիս է ներկայական ձևը, որի դիմաց օրինակ է բերում Շնորհալուց (ՆՀԲ, 2, 418): Այսպիսով՝ նորակազմությունը ձևավորվել է ներկա բառից՝ -ական ածանցի բաղադրությամբ:

Նմանախաւսել բայի հիմքն է նմանախօս (ՆՀԲ, 2, 431) ածականը՝ «որ խոսում է ուրիշների նման» իմաստով: Ահա նորակազմ բայի գործածությունը՝ անորոշ դերբայի գործիական հոլովով՝ որպէս ձևի պարագա. «Եւ եղեն ամենեքին սոքա հմուտք արտաքին արուեստից եւ գրարուք գրեալսն չարաչար մեկնեցին եւ գրագումս ի ձեռն արուեստաւոր բանիցն կործանեցին նմանախաւսելով եւ աննմանիս խորհելով (102):

Բառի արմատներն են՝ նման, որն ունի պահլավական ծագում (ՀԱԲ, III, 459), և խաւս:

Շարագնդել բայը գործածվել է որպէս ստորոգյալ. «Ո՛չ գշարաթ, այլ գկիւրակէ քան շարաթուն ակն մահ է, թէ արտաձգէ ոք՝ յանցեալսն արտաձգի, ո՛չ յապառնիսն, քեւ եթէ շարագնդէ ոք՝ ըստ ամփոփմանն եւ ըստ քթթելականն» (122):

Բառը հունաբան ոճի կազմություն է՝ շար- նախաձանցով և, հավանաբար, «կծկել, բոլորել» իմաստն է արտահայտում, ինչպէս գնդել (ՆՀԲ, I, 565) բայը, որի գունդ արմատը պահլավական ծագում ունի (ՀԱԲ, I, 594-595):

Նույն սկզբունքով են կազմված շարակայություն գոյականը, շարակող ածականը, ինչպէս նաև շարաճշգրտել բայը. շար- նախաձանցը իմաստային որևէ փոփոխություն չի առաջացնում և, փաստորեն, ձևական է:

Շարակայություն գոյականը ուղիղ ձևով հանդես է եկել որպէս ուղևորման հայցական. «Ահա Հոգին Սուրբ ի շարակայություն կենսաբեր Աւետարանին նախահագեցոյց գձովհաննէս ի կատարման Աւետարանին» (117):

Բառը «կայուն լինելը» իմաստն է արտահայտում, ինչպէս և կայունություն բառը (ՆՀԲ, I, 1046), որից ածանցվել է նորակազմությունը: ՆՀԲ-ում նշված է շարակայումն ձևը միայն՝ «գողում, կապակցում» իմաստով (ՆՀԲ, 2, 470): Բառի կայ արմատն անստույգ է (ՀԱԲ, II, 504):

Շարակող ածականը (ՆՀԲ, I, 1046) որպէս հետադաս որոշիչ է հանդես եկել. «Եւ յետ նորա գՄատթէոս նախակարգեաց՝ նախահաւաքելով գնա ի սկզբան ստուգեաց գՄնունդն ի Կուսէն , գՂուկասս, որով գաւետիսն պատմեաց, եւ գՄարկոս՝ գմկրտությունն շարակող, ընդ Հովհաննէս եւ ընդ Մատթէոս ի մէջ փակեաց (117): Կող բառը բնիկ հայերեն է (ՀԱԲ, II, 620):

Շարաճշգրտել «ճշգրտել» բայը (ՆՀԲ, 2, 471) ստորոգյալի պաշտոնով է հանդես եկել. «Հանգոյն սմին եւ սուրբն Գրիգոր շարաճշգրտէ զՀաւրէ ի կատարման աւետեացն...» (114 – 115): Ճշգրիտ բառն ըստ Աճառյանի անստույգ է (ՀԱԲ, III, 208):

Շնորհաւանդ բառը «շնորհներ ավանդող իմաստն ունի և գործածվել է որպէս նախադաս որոշիչ. « Յովհաննէս աւետարանիչ, որ գլուխն էր ամենայն շնորհաւանդ պարգեւաց...» (106): Նորակազմութեան բաղադրիչները կապակցված են խնդիր լրացում + բայահիմք հարաբերությամբ: Բառի շնորհ (ՀԱԲ, III, 527) և աւանդ արմատները պարսկական ծագման են (ՀԱԲ, I, 354):

Վերակացիկ բառը, հավանաբար, «վեր կացած» իմաստն է արտահայտում և այդ հարադրությունից էլ կազմված է (ՆՀԲ, 2, 806): ՆՀԲ-ն բերում է վերակացեալ ձևը, որի դիմաց վկայում է միայն «Ճառընտիրը»: Ածականը գործածված է որպէս կոչական. «Արդ, տե՛ս բարեփառող, գորոգայթ զանխլացեալ եւ քաջ վերակացիկ, հայեցիկ լե՛ր...» (127): ՆՀԲ-ում բերված են նույն հիմքով վերակացու (-ուրին), վերակացեալ, վերակացումն ձևերը: Այսինքն՝ նորակազմութիւնը ձևավորվել է իկ ածանցով միայն:

Տարեարք // անտարեարք հականիշային գույգը գործածված է հետևյալ նախադասության մեջ. «Ապաքէն, գոր աւետեացն Գարբիել (տարեարք եւ անտարեարք, գոյք եւ անգոյք) առհասարակ ցնծան՝ ոչ կանոնեցին եւ ոչ կարգեցին զիրս ընթերցուածոց...» (104): Հավանաբար, բառերը պետք է թարգմանել «տարիքով մեծ» և «տարիքով փոքր»:

Բառի տարի արմատն անստույգ է (ՀԱԲ, IV, 385):

Տրամագաղափարութիւն գոյականը գործածված է հետևյալ նախադասության մեջ՝ որպէս ստորոգելի. «Ըստ այս խորհրդաբանութեան նախատպելով զպատիւ յերիս աւուրսն Կաթողիկէ ո՛չ ընթեռնուն, զի տրամագաղափարութիւն է ըստ յարակայեցումն հարսանեաց ի վերնում առագաստին» (124):

Բառակազմական հիմքն է գաղափարութիւն «տպավորություն, կերպ, նման» (ՆՀԲ, I, 524)՝ բաղադրված –ութիւն ածանցով: Բառը հունարան ոճի կազմություն է՝ կապված տրամ- նախաածանցի գործածության հետ: Գաղափար բառը մեկնաբանվում է որպէս կաղապար բառի տարբերակ, որը հունական ծագում ունի (ՀԱԲ, II, 494):

Յորենակերպ ածականը «ցորենանման» իմաստով գործածվել է որպէս հետադաս որոշիչ. «Եւ յաճախեաց անարեւնութիւն, ցամաքեցաւ հաւատ, եւ սկսաւ տարածել որումն ցորենակերպ սուտ վարդապետութեան» (100):

Ըստ երևույթին, բառը կազմված է բառակապակցության բայի զեղչումով: Իսկ ցորեն (ցորեան) բառի ծագումն անստույգ է (ՀԱԲ, IV, 460):

Ուղումբրամած անցյալ դերբայաձևի կազմությունը պարզ չէ: Այն որոշյային կիրառություն է ստացել հետևյալ նախադասության մեջ. «...եւ եղ դերաքրիստոսն զուղումբրամած թագն ի գլուխն իւր եւ գահակալեցաւ» (100):

Օձնեցին գործածել է նաև քողախնդիր ածականը, որը ՆՀԲ-ն չի նշում: Այն «քողի տակ առնված, ծածկված» իմաստով և գործիական հոլովով գործածվել է որպէս ձևի պարագա. «... ցուցեալ է եւ ասացեալ զառաջնոյն Արտեմոնն, թէ աշակերտեալ է Յովհաննու աւետարանչի, ո՛չ բարեւեր կամաք, այլ քողախնդ-

րիւ» (102): ՆՀԲ-ն նշում է միայն քողախնդրեմ բայը (ՆՀԲ, 2, 1011) և օրինակներ է բերում Օձնեցու «Ընդդէմ պաւղիկեանց» և «Կանոնք» երկերից:

Բայր քող՝ «երեսի ծածկոց» արմատը հնդեվրոպական, ծագման է¹¹, իսկ ինդիք բառն անստույգ է (ՀԱԲ, II, 379):

Այսպիսով՝ Հովհաննէս Օձնեցու նորահայտ երկում առկա են առնվազն 40-ից ավել նորակազմ բառեր, որոնցից մի քանիսը (աղանդակից, արտաձգել, եռահրաշ, ըստարտուղիւմ, յետադարձութիւն, յոգնահեղք) գործածվել են նաև հետագա դարերում և այդպիսով ընդգրկվել ՆՀԲ-ում: Իսկ այդ բառերի մեծ մասը դեռևս միայն հեղինակային գործածություն ունի: Թերևս դա է պատճառը, որ այդ կարգի բառերը վկայված չեն ՆՀԲ-ում:

НОВЫЕ СЛОВА В НОВОВЫЯВЛЕННОМ СВЯТОЧНОМ СОЧИНЕНИИ ОВАННЕСА ОДЗНЕЦИ

VARSIK NERSISSYAN

Р е з ю м е

В 2006 г. увидело свет одно из сочинений Ованнеса Одзнеци «Նախահաւարքումն պատմութեան պսւմ բանից՝ Յովհաննու Վերձանաւղի», которое не только по содержанию, но и по своей лексике связано с его прежними творениями. Употребляемые в нем многочисленные слова и термины (они в основном церковно-религиозного характера) встречаются и в известных сочинениях Ованнеса Одзнеци. Большинство из них зафиксировано в «Новом армянском словаре». Однако такие слова, как աղանդախումբ, աներկաւորելի, առաքելաստեման, ալեստազուարճ, դժնախորանգութիւն, հոգէպաճոյճ, մոլեղաւան, ոյքնապէս, ցորենակերպ и т. д. не нашли отражения в этом словаре. Эти слова еще не вышли за пределы авторской речи, что и послужило причиной их отсутствия в «Новом армянском словаре».

NEW WORDS IN NEWLY-FOUND CALENDAR WORK OF HOVHANNES ODZNETSY

VARSIK NERSISSYAN

S u m m a r y

One of the works of Hovhannes Odznetsy with the title of «Նախահաւարքումն պատմութեան պսւմ բանից՝ Յովհաննու Վերձանաւղի» was published in 2006, which is connected with the

¹¹ Գ. Ջ ա հ ո լ կ յ ա ն. նշվ. աշխ., էջ 263:

previous works not only in the sense of contents, grammar, but also in the sense of word stock. Many new words and terms used in this work (they mainly have religion-church trend), are also used in Odznetsy's previous works. Many words used here are of course testified in the “New Armenian Dictionary”. In case of some words the “New Armenian Dictionary” brings testimonies only for the future. Meanwhile they are used in the mentioned work. But most of such words have been used so far only by the author . And that is why they aren't testified in that dictionary. They are *աղանդախումբ, աներկառորելի, առաքելասահման, անտազուարձ, դժնախորամանգութիւն, հոգեպաճոյճ, մոլեղաւան, ոյքնապէս, ցորենակերպ* etc.